ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 259-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2008.04.09/22(612) Հոդ.319	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	20.03.2008
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	31.03.2008
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	19.04.2008	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2008 թվականի N 259-Ն

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի «ը» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում հաստատել բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի գրանցամատյանի օրինակելի ձևը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

2008 թ. մարտի 31
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
մարտի 20-ի N 259-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ) պետական կադաստրի վարման կարգը:

2. Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի (այսուհետ՝ պետական կադաստր) վարման խնդիրներն են այդ տարածքների՝

1) արդյունավետ պլանավորումը և զարգացումը.

2) գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի անցկացման ընթացքում ստացված տվյալների հավաքագրումն ու դասակարգումը.

3) պահպանության ռեժիմի հսկողության և վերահսկողության բարելավումը.

4) օգտագործման օպտիմալ ծանրաբեռնվածության բացահայտումը:

3. Պետական կադաստրը վարում է շրջակա միջավայրի ոլորտում Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին):

(3-րդ կետը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

4. Պետական կադաստրի վարման համար հիմք են հանդիսանում ԲՀՊՏ-ների գիտական ուսումնասիրությունները, պետական հաշվառման և մոնիթորինգի իրականացման արդյունքում ստացված տվյալները, կառավարման պլաններում ներառված տեղեկատվությունը, ինչպես նաև տարածքների օգտագործման պայմանագրերի, վճարովի ծառայությունների մատուցման մասին տվյալները և այլն:

5. Պետական կադաստրն ստեղծվում և վարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Պետական կադաստրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

1) ԲՀՊՏ-ների ընդհանուր բնութագիրը.

2) ԲՀՊՏ-ների պահպանությունը, կենսապաշարների վերարտադրության և վերականգնման ապահովումը.

3) ԲՀՊՏ-ների օգտագործումը.

4) ԲՀՊՏ-ների պահպանությունն իրականացնող մարմինը:

7. «Բնության հատուկ պահպանվող տարածքի ընդհանուր բնութագիրը» բաժինը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) ԲՀՊՏ-ի մակերեսի, սահմանների ու գործառնական գոտիների (ներառյալ պահպանման գոտին) նկարագրության մասին և քարտեզագրական նյութեր.

2) ԲՀՊՏ-ի բնական պայմանների նկարագրության մասին (ռելիեֆ, հողային ծածկույթ, ջրագրություն, կլիմա, բուսական և կենդանական աշխարհ՝ համապատասխան քարտեզներով).

3) բնորոշ և կրիտիկական վիճակում գտնվող էկոհամակարգերի մասին.

4) կենսաբանական բազմազանության, այդ թվում՝ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող և Կարմիր գրքում գրանցված տեսակների ու դրանց պոպուլյացիաների մասին.

5) բնական պաշարների, այդ թվում՝ հողային, ջրային և անտառային, որսի կենդանիների, արդյունագործական նշանակություն ունեցող բուսական ու կենդանական տեսակների որակական, քանակական և տնտեսական բնութագրերի մասին.

6) բնության և պատմամշակութային ժառանգության մասին.

7) ենթակառուցվածքների, այդ թվում՝ հանգստի, սննդի, այլ սպասարկման օբյեկտների, ճանապարհային ցանցի, տուրիստական երթուղիների և այլնի մասին:

8. «Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունը, կենսապաշարների վերարտադրության և վերականգնման ապահովումը» բաժինը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) անտառի պահպանության միջոցառումների մասին.

2) հողային ռեսուրսների պահպանության, խախտված հողատեսքերի վերականգնման միջոցառումների մասին.

3) ռեկրեացիոն գոտիների բարելավման միջոցառումների մասին.

4) կառավարման պլաններով նախատեսված և իրականացված այլ միջոցառումների մասին.

5) կենսապաշարների պահպանության և վերականգնման ծրագրերով, պետական ու միջազգային ֆինանսավորմամբ նախատեսված և իրականացված միջոցառումների մասին.

6) արձանագրված ռեժիմի խախտումների մասին (ապօրինի անտառահատումներ, հողազավթումներ, որսագողության, ձկնագողության դեպքեր և այլն).

7) արձանագրված հրդեհների մասին (մակերեսը, հասցված վնասի չափը և այլն):

9. «Բնության հատուկ պահպանվող տարածքի օգտագործումը» բաժինը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) օգտագործվող տարածքների և օգտագործման ձևերի մասին՝ համապատասխան քարտեզագրական նյութերով.

2) սեփականաշնորհված տարածքների (ազգային պարկերի համար) մակերեսի և օգտագործման ձևերի մասին.

3) հանգստի կազմակերպման ձևերի և այդ նպատակով օգտագործման տրամադրված հողատարածքների մասին.

4) անշարժ գույքի պետական միասնական կադաստրում գրանցված հողերի պետական հաշվառման, իրավական (պայմանագրային տվյալներ, սեփականության իրավունք, վարձակալություն և այլն) և տարածական (թվային տեղագրական քարտեզներ՝ ներառյալ ենթակառուցվածքները, բնակավայրերը, հողատեսքերը) տվյալների մասին.

5) բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում ներառված համայնքների սոցիալ-տնտեսական ցուցանիշների, իրականացված բնապահպանական միջոցառումների մասին:

10. «Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանությունն իրականացնող մարմինը» բաժինը ներառում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) իրավաբանական կարգավիճակի և դրա ստեղծման մասին.

2) կառուցվածքի և հաստիքների մասին.

3) ամենամյա աշխատանքային ծրագրերի և դրանց կատարման ժամանակացույցի մասին.

4) ըստ ֆինանսական աղբյուրների՝ ֆինանսավորման և նյութատեխնիկական ապահովման մասին.

5) այլ կազմակերպությունների հետ համագործակցության մասին (գիտական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ, դրամաշնորհային ծրագրեր, իրավաբանական և ֆիզիկական անձինք):

III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

11. Պետական կադաստրում տվյալների գրանցումը մշտապես իրականացվող գործընթաց է, որն ապահովում է տվյալների համալրումը, դասակարգումը, պահպանումը և փոփոխությունների օպերատիվ մուտքագրումը:

12. ԲՀՊՏ-ների անտառների և անտառային հողերի մասին կադաստրային տվյալները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անտառային պետական կադաստրի վարման կարգին համապատասխան:

13. Պետական կադաստրի վարման ընթացքում ԲՀՊՏ-ների հողերի հետ կապված բոլոր փոփոխությունների մասին տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ հողերի պետական հաշվառում իրականացնելու համար:

14. Պետական կադաստրի տվյալները գրանցվում են գրանցամատյանում և համակարգչային տվյալների շտեմարաններում, որի վարման ժամանակ պետք է ապահովվի միմյանց հետ դրանց համադրելիությունը:

15. Պետական կադաստրի տվյալների շտեմարաններում և գրանցամատյաններում տվյալները մուտքագրվում են, և փոփոխությունը կատարվում է դրանք ներկայացվելու օրվանից 20-օրյա ժամկետում: Այն պայմանագրերից ծագող իրավունքների մասին տվյալները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պարտադիր պետական գրանցման, հաշվառվում և մուտքագրվում են միայն այդ իրավունքների պետական գրանցումից հետո: Պետական կադաստր վարող լիազորված մարմինը պատասխանատու է տվյալները ճշգրիտ և սահմանված ժամկետներում մուտքագրելու համար:

16. Սույն կարգի 7-10-րդ կետերում նշված պետական կադաստրի ամփոփված տվյալները համարվում են պաշտոնական և կարող են հիմք հանդիսանալ լիազորված պետական մարմինների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ սոցիալ-տնտեսական ծրագրերի, ռազմավարությունների, պլանների և այլ փաստաթղթերի մշակման, ինչպես նաև որոշումների ընդունման համար:

17. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին պետական կադաստրի տեղեկատվության պաշտոնական տրամադրումն իրականացվում է անվճար՝ դրանց կողմից ներկայացված հարցման դեպքում:

18. Պետական կադաստրի տվյալները, բացառությամբ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի, տեղադրվում են համապատասխան ինտերնետային կայքում, որից կարող են անվճար օգտվել բոլոր շահագրգիռ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

(հավելվածը փոփ. 10.10.19 N 1442-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**